Ֆ. Տ. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 75-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ ՊԱՐՈՆ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան,

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեր ծննդյան 75-ամյա տարելիցը։

Ավելի քան 50 տարի Դուք ակնառու պետական, գիտական, հասարակական գործունեություն եք ծավալում Հանրապետությունում, ապրում մեր ժողովրդի հոգսերով։

Դուք մեծապես նպաստում եք հայրենական գիտության զարգացման, գիտնականների երիտասարդ սերնդի կրթման ու դաստիարակման, գիտական ներուժի պահպանման, հայ գիտական միտքն ըստ արժանվույն միջազգային գիտական ասպարեզում ներկայացնելու գործին։

Խորապես գնահատելի է նաև Ձեր ազգանվեր գործունեությունը մեր ժողովրդի համար վերջին դժվարին տասնամյակի ընթացքում, երբ Դուք, հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ՝ հավատարիմ մնացիք գիտնականի և հասարակական գործչի կոչմանը, ակտիվորեն մասնակցեցիք նորանկախ Հայաստանի կայացմանը։

Մաղթում եմ Ձեզ ամենայն բարիք, առողջություն, նոր հաջողություններ՝ ի շահ մեր ժողովրդի և հայոց պետականության։

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ
Հայաստանի Հանրապետության նախագահ

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՈՂՋՈՒՅՆԸ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիան իր հարգանքի տուրքն է մատուցում Ձեզ՝ Ձեր ծննդյան 75-ամյակի առթիվ, ցանկանում քաջառողջություն, երկար տարիների ստեղծագործական կյանք։ Մենք լիովին գիտակցում ենք այն խոշոր ավանդը, որ Դուք ունեք գիտության և տեխնիկայի զարգացման ասպարեզում։

Մի շարք տարիներ, գլխավորելով Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը, Դուք հիմք դրեցիք Հայաստանում հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգերի ստեղծմանը։ Այդ աշխատանքներն արժանացան գիտական և կառավարական բարձր պարգևների։

Սակայն չսահմանափակվելով ավտոմատացման կառավարման համակարգերի մշակմամբ, Դուք ցույց տվեցիք այն ուղիները, որոնցով հանրապետության գիտական միտքը իր գործնական կիրառումը գտավ ժողովրդական տնտեսությունում և երկրի զինված ուժերի ամրապնդման գործում։

Ձեր մեծ հեղինակությունը գիտության և տեխնիկայի բնագավառում, Ձեր անուրանալի կազմակերպչական կարողությունները հաշվի առնելով, ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը 1993 թ. միահամուռ կերպով Ձեզ ընտրեց Ակադեմիայի պրեզիդենտ։ Դուք ժառանգեցիք գիտական մեծ ներուժ, որը, սակայն, տնտեսական ծանր պայմաններում կարող էր փոշիանալ, եթե չլինեին Ձեր ակնառու կազմակերպչական կարողությունները։

Հաղթահարելով Հայաստանում գիտության զարգացման ճանապարհին առաջացած բազմաթիվ դժվարությունները, Դուք անհողդողդ կամքով տանում եք ՀՀ ԳԱԱ-ն դեպի գիտության նոր բարձունքները։ Դրան օգնում է Ձեր, որպես պետական-հասարակական գործչի, հսկայական փորձը։

Տասներկու տարի անընդմեջ Դուք ղեկավարել եք Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ որպես վերջինիս նախագահ։ Հայաստանի մի շարք կարևորագույն կառույցների անունը անմիջականորեն առնչվում է Ձեր անվան հետ։

Ձեր գործունեությունը ինչպես գիտության և տեխնիկայի բնագավառներում, այնպես էլ պետական-հասարակական ասպարեզում իրավամբ արժա-



նացել է ամենաբարձր գնահատականի, որի մասին, մասնավորապես, վկայում է այն, որ ընտրվել եք միջազգային ակադեմիաների անդամ, պարգևատրվել մի շարք երկրների շքանշաններով, մեդալներով։ Նայելով Ձեր գործունեությունը արտացոլող կենսագրական տվյալներին, կարելի է զարմանալ այն ամենով, ինչ հաջողվել է Ձեզ իրականացնել մեր ժողովրդի համար։ Մենք հուսով ենք, որ Դուք տոգորված եք բուռն ցանկությամբ և օժտված մեծ հնարավորություններով՝ ավելին անել մեր հանրապետության համար, հայ ժողովրդի համար։

Ցանկանում ենք Ձեզ, թանկագին Ֆադեյ Տաճատի, երկար տարիների քաջառողջ կյանք, նոր սխրանքներ՝ գիտության և տեխնիկայի, գիտակազմակերպչական և հասարակական-պետական գործունեության բնագավառներում։

ПРЕЗИДЕНТУ НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИИ

ФАДЕЮ САРКИСЯНУ

Глубокоуважаемый *Фадей Тачатович!*

Президиум Российской академии наук сердечно поздравляет Вас, крупного ученого и организатора науки, известного государственного деятеля, с 75-летием со дня рождения.

Более полувека Вы служите науке и научно-техническому прогрессу Армении и бывшего СССР. Ваша научная деятельность охватывает самые актуальные направления современной науки и техники—вычислительную технику и автоматизированные системы управления. Вы стали признанным лидером научной школы в области вычислительной техники и информатики в республике.

Возглавляя Ереванский научно-исследовательский институт математических машин, Вы добились больших успехов в создании электронных вычислительных машин. Под Вашим руководством и при личном участии были разработаны и освоены в производстве известные ЭВМ семейств «Раздан», «Наири», ЕС-1030, ЕС-1045 и другие.

Получила заслуженное признание Ваша роль в разработке автоматизированных систем управления, имеющих важное значение для решения задач развития науки, техники, народного хозяйства.

Нам хорошо известна и Ваша плодотворная деятельность на посту Председателя Правительства Армении, и, прежде всего, Ваш вклад в создание и развитие в республике радиоэлектронной промышленности, приборостроения, точного машиностроения.

Свидетельством высокого авторитета ученого и государственного деятеля стало избрание Вас президентом Национальной академии наук Республики Армении. С момента своего образования Академия наук Армении тесно взаимодействует с Российской академией наук. В нынешних трудных условиях наши Академии прилагают все усилия к продолжению сотрудничества как на основе двусторонних соглашений, так и в рамках многосторонних соглашений. Мы высоко ценим Ваши усилия по сохранению и развитию науки в Республике Армении и вовлечению научного потенциала республики в решение актуальных научно-технических проблем, по развитию научного сотрудничества стран СНГ.

Ваша успешная научная, организаторская и общественно-политическая деятельность получила высокую оценку и отмечена государственными премиями СССР и Украины, правительственными наградами, избранием Вас членом академий других стран.

В день Вашего юбилея желаем Вам, дорогой Фадей Тачатович, дальнейших успехов в научной работе, научно-организационной и общественно-политической деятельности, крепкого здоровья, личного счастья, благополучия в семье.

И. о. президента
Российской академии наук
академик **Г. А. МЕСЯЦ**

Вице-президент
Российской академии наук
академик **Н. П. ЛАВЕРОВ**

И. о. главного ученого секретаря
Российской академии наук
член-корреспондент РАН **Е. Д. ТЕРЯЕВ**

Հանդեսի խմբագրություն